

Տարեկան գին և Պոլսոյ ևր 8 ՄԷՃ
Վեցամսեայ և Պոլսոյ 4 ՄԷՃ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրկ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ 25 ՅՈՒՆԻՍԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՉԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 3 փետր

Սէ կեդրոնին լրագրողները կրտսն թէ
ժողովին այս մասն ալ ձախարկուան հետ
քուէ տուաւ երկի հանրապետութեան

Ըստ հուանական կերևի որ նոր նա-
խարարութիւնն երկու կեդրոններն
պիտի աւանտի սահմանադրական օրինաց

Փարիզ 3 փետր

Ճողովն ընդունեց սահմանադրական
օրինաց չորսուածը, որ նախա-
րարաց պատասխանատուութեան կը վե-

Փարիզ 3 փետր

Պ Տիրացելն Օսպորին պարտը կը
գտնուի թողուելոց քով

Փարիզ 3 փետր

Նախարարը այցելութիւն տուին կա-
րիպոլիսին

Վերսայլ 3 փետր

Ազգային ժողովն ընդունեց սահմա-
նադրական օրինաց չորսուածն,
որ նախարարաց և նախագահին պատաս-

Փարիզ 3 փետր

Եղիպտոսի մէջ առաջարկեալ դո-
տատանական նոր կարգ ադրութիւնները
քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովին

Փարիզ 3 փետր

Օտանեան կատարութեան կողմէ
Քոնսթանտինոպոլի Սոսիէթէ Ժեներալ-
էն փարիզի և Ստորին Նահանգաց Պան-

Փարիզ 3 փետր

Կրեք կայսրութեան մէջ գոյացած
համաձայնութիւնը Բոսիորիցայի գէպըին
խաղաղութեամբ լուծման երաշխաւորու-

Փարիզ 3 փետր

Վիեննա 4 փետր
Նախընտրութիւն մարտի 29 Վրաստի ընդ
տեղ ազատական կուսակցութեան գրութիւն
ընտրուեցաւ

Փարիզ 3 փետր

Սարբուրի երկրին Կղիպտոսի հետ
միացումը կատարուած իրազեկութիւն մէ:
Տարբուրի Սոսիէթէն հպատակութիւն
յանձն տուաւ:

Փարիզ 3 փետր

Սոսիէթէն 41 1/2

Իսկ 1865 66 1/2-67
1869 36
1874 66 1/2-67
1872 77 1/2-78
1873 53
Նոր փոխառութիւն
Անգլ Բոնո 32 3/8
Վրաստանի 1/4 փետր
Ռուսաց Միտիւն-Օրլան 7 7/8
Ֆոնր Տոկթրաճ 5
Գարուած 15000 հակ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԷՏ: Սուլթանն իւր ճարտարա-
պետ Պոլեան վսեմ Սարգիս պէյին
մատուցած ծառայութիւններէն ու-

Աւետարանական ուխտին պատ-
գամաւորութեան անդամները չա-
րեքշաբթի իրիկուն մայրաքաղաքէս
մեկնեցան Մարտիկայի շաբաթուով:

Լէվրնի՝ Հէրըլա կրտսն թէ մայ-
րաքաղաքէս մեկնած ժամանակին
Սնդղիոյ վսեմ զեւազանին միջոցաւ
ընդհարեալ ըլլաւ:

Մեծ Եպարքոսին, որ չէ հաճեր վեհ-
Սուլթանին ներկայացնել զիրենք,
որպէս զի թուրքից մէջ կրօնական
ազատութեան համար բերած ու-

Հէյալ անուն թուրքերէն զա-
ւելչուական թերթը Բ. Դրան հրա-
մանաւ մէկ ամիս դադարեցաւ:

Խոտղիւզ հրեայ սեղանաւորն
սպաննող խրոտածն հարցաքննու-
թեան ենթարկուելով իւր համակոհ-
ները ցոյց տուաւ, որ հինգ խրոտած

Լէվրնի՝ Հէրըլտի մէջ կը կարգանք
թէ Շուսու ընտելեալ Պ. Սիմոն ա-
նուն երկաթուղայ ճարտարապետ
մը, ազգաւ հաղղիցի կամ Պէճը-

Վրաստանի կատարութեան կողմէ
Քոնսթանտինոպոլի Սոսիէթէ Ժեներալ-
էն փարիզի և Ստորին Նահանգաց Պան-

Կը դանակած են զանոնք գաւազանե-
րով ու քարերով, և զոմանս ալ կը
վիրաւորեն: Անոնք ալ նորէն հար-
սին տունը կը փախչին կոպտատանին՝
իրենց փեղցիւններն ու պատուած

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ
ԵՍՏԱՄԵ ՌՍՏՈՒՄԻՆ

Table with 3 columns: Date, Description, Amount. Includes entries for 24 June, 25 June, and various financial transactions.

Table with 3 columns: Description, Amount, Unit. Lists various items and their values.

ԱԶԳԱՅԻՆ

Կը Լուսնը թէ վարչութեան Գա-
ղաքական ժողովն Ազգային ընդհա-
նուր արց ծրագիրը պատրաստած

Կը լուսնը որ Ազգային ժողովն
անմիջապէս նկատողութեան կառնու-
այս ամենակարեւոր խնդիրն, որոյ

Սարբուրի երկրին Կղիպտոսի հետ
միացումը կատարուած իրազեկութիւն մէ:
Տարբուրի Սոսիէթէն հպատակութիւն
յանձն տուաւ:

Վրաստանի կատարութեան կողմէ
Քոնսթանտինոպոլի Սոսիէթէ Ժեներալ-
էն փարիզի և Ստորին Նահանգաց Պան-

Գաւազան լրագրաց հան, ու
Կապը խոստովանութեան գրութիւն
Կապը լրագրաց գերարեւան անց
յամ որ եւ իցէ գրութիւն խոստովան-
՝ Տնօրէնին պիտի ուղղուի: Պո-
լիս. Չինիի խան, Մասիսի գրասեն-
նակը:
Համար ծախքը չգճարուած են
Կակ չընդունուի:

Գահութեամբ իմացանք որ Ամեն-
Սրբազան Պատրիարք հայրն անցեալ
կիրակի օրը Գառգիւղի Սրբաւան
երկեսն փորձարտին բացման հան-

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՒՂԵՑԻՈՑ
ՄԻՌՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՍԿԱՌ ԹՇՆԱՄԻՆ

Մեր առջև յօդուածով բացարձա-
կապէս հաստատեցինք թէ՛ Օրագիր
է աղբին մէջ Հայաստանեայց եկե-

օրինաց և վարդապետութեանց հա-
կառակ նորանոր մտարւթեանց մէջ
կրնիցմի, նման անոր՝ որ ընկած աղբ-

Օրագիր Ահի թուովը դարձեալ
կրտսն թէ, թեթէ հաւատարմութիւն
նը մէկը թողուի, և կրօնական ա-

Օրագիր այս խօսքերէն հետեցը-
նել կուղէ թէ՛ Հայաստանեայց եկե-
ղեցին իր մէջ ոչ միայն հաւատարմու-

Փարձանք կրտսնք թէ՛ Սրեկ-
եան քրիստոնէայ եկեղեցեաց մէջ
եթէ ազատամիտ և ներող եկեղեցի

Ս. Գրոց ան յեղի սկզբանց և վար-
դապետութեանց, այն ալ մի միայն
Հայաստանեայց կամ տղիկէ և առա-



նէ անտի հատարանութիւն ընտրուած չէ, և կրօնի ու խղճի ազատութեան սկզբունց և կործնաց սահմանին մէջ ա՛յն ստորին յառաջ գացած է, որոն օտար քրիստոնեայ ազգերն իսկ խղճի և անաչառութեամբ կը վկայեն, և որ ոչ նուազ փառք և պատիւ կը բերէ մեր եկեղեցւոյն:

Բայց ինչո՞ւ կը զրպարտէ Օրագիրը Հայաստանեայց եկեղեցին իբրև հատարանութեան, — վասն զի Հայաստանեայց եկեղեցին իրմէ բաժանեալ մասերը նորին իր միութեան վերածելու համար իր դաւանութիւնը, դարաւոր աւանդութիւններն ու հնաւանդ սովորութիւնները զոհել չուզեր Հայ բողոքականաց, որոց արդէն յարած ըլլալով Օրագիրը, բաժանեալ է կամ այդ զոհողութիւնները պահանջել, և կամ այդ ձրի զրպարտութիւնն ընկ ազգին:

Դարով իւր վերի ստորիութեան երկրորդ մասին, որդէն քանիցս ազատ ցած ենք թէ՛ Օրագիրը կրօնական ազատութեան սկզբունքը բուստ սրեալ ազգաց ընդունած կերպիւ չընդունիր, այլ բողոքականաց շահուն ծառայեցնելու կերպիւ միայն կընդունի, և ստոր ազգացը կը պահանջուի որ՝ հրժանեալ ազատութիւնը կործնեաց սահմանին մէջ սփռուի:

Ասկէ կը հետևի թէ Հայաստանեայց եկեղեցին ինչ որ կընդունի և կը դաւանէ, և ինչ որ իրեն էական է և նախական, պարտի զանանք իւր անհատից համոզելը զոհել, կամ աւելի պարզ ըսելով՝ սրբափ զառակ սնի, և իւրաքանչիւրն սրբափ կարծիք ունի և կրնան ունենալ, այնքան կրօնքներ ունենալու է իր մէջ ահա՛ այս է Օրագրոյ ընդունած կրօնական ազատութեան անսովոր սկզբունքը: Առտի սխալ է այն կարծիքը թէ միևնոյն եկեղեցւոյ անդամ մանկ մէջ կրնայ ամբողջով, մինչդեռ քաղաքակիրթ աշխարհն այն պայմանաւ միայն կրնուի կրօնական ազատութիւնը, որ ոչ ուրիշը իւր կրօնքը նախատէ և իւր խղճին վրայ բռնանայ, և ոչ ալ ինքն ուրիշի կրօնքը նախատէ և անոր խղճին վրայ բռնանայ, և չէ թէ մէկ եկեղեցւոյ անդամներ՝ տարբեր կրօնքներ և համոզումներ ունենալով՝ դարձեալ յանուն կրօնական ազատութեան նոյն եկեղեցւոյ անդամները կոչուի ուղեն:

Ասկէ աւելի դալթակողական և մտքորական յոյտարարութիւն ինչ կրնայ ըլլալ, որ մեր եկեղեցին ի հիմանէ քանդելու կը ծառայէ: Առանց օտար համոզման և ներշնչութեան՝ կարելի չէ այսպիսի ծախող սկզբունք մը յղանալ, և զայն ազգին ընդունել տալու ճշմոյս:

Կարի ուշադրութեան արժանի է Օրագրոյ սա հնաեւեալ խօսքն ալ. «Սակայն եթէ այդպէս չընելով (զոհողութիւններ չընելով) ստիպենք ժողովուրդը, կըսէ, որ կէս մը պապական համոզում ունենալուն համար երթոյ պապական դրօշի, և կէս մ'այ բողոքական համոզում ունենալուն համար երթոյ բողոքական դրօշի, ապէ՛ տւելի ինչ մեծ օգնութիւն և ձեռնառութիւն արդէն բաժանեալ մասանց ստուար թիւ կազմելուն»:

Անտարակոյս ենք թէ՛ Օրագրոյ այս խօսքերուն ինչ ստիճան իրաբէական ըլլայն ամեն ազգային ընթացիկ ինքնին կարող է կշռադատել: Մեր մէջ՝ ըստ Օրագրոյ՝ կէս մը պապական կէս մ'ալ բողոքական հա-

մոզում ունեցող ա՛յնպիսի ազգայինք կը դաւանին եղբր, որ եթէ Օրագրոյ արահանում կրօնական զոհողութիւնն ազգը վայրկեան մը յապաղենք, Բժշօշն-Բէան և յեանոս-Բէան քրօնքի ընդ եղբ հայ բողոքականաց և Պատկանաց թուոյն ստուարանալուն: Է՛հ, եթէ մարդիկ լսեն՝ քարինք կազաղակեն թէ Օրագրոյ այս խօսքը՝ Հայաստանեայց եկեղեցւոյ միութեան գիմակաւոր թշնամի մ'ըլլալուն յայտնի խոստովանութիւն է, և թէ բացարձակապէս բողոքական կրօնի ներշնչութիւն:

Կրնա՞յ մեզ ցուցնել Օրագիրը որ իւր բռնած շատ մը կէսկէսներուն, այսինքն սկեզակիկաներուն և կամ բողոքական կամ պապական կրօնքն ի վերջէ ընդունող ազգայնաց մէջէն՝ գտնէ մէկը, որ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ վերիութիւն դանիւնէ յոյսը կտրելով, փրկուելու համար յիշեալ կրօնքներէն միայն գիմակալ ըլլայ անկեղծութեամբ. արարելոյս չկայ թէ չկրնար ցուցնել. վասն զի թէ՛ մայրաքաղաքիս և թէ՛ դաւառաց մէջ՝ անանք որ կրօնափոխութեան դիմած են և կը դիմեն, ինչպէս որ ամեն ոք գիտէ, ո՛չ թէ ներքին համոզմամբ կամ վերաբերու յաւով այլ՝ կամ շահամոլ բողոքականութեան, կամ սիրահարութեան, կամ հարստահարութեանց դէմ պայտապանուելու և կամ արդ զմարումէ ազատելու պատճառներով միայն իրենց ազգային եկեղեցիէն բաժնուած են: Դ՛այն իսկ ինքն Օրագիրը կրնա՞յ մեզ ապահովեցնել թէ՛ ինքն ալ խղճիւր յարած է բողոքական կրօնին, և ոչ թէ այս մեր ցուցած պատճառներէն միայն թիւրգրութեամբ:

Մեզնէ շատերուն կրօնափոխութեան միտում ունենալու մեծ ու յայտնի խաբէութիւնն անոր համար կրնէ Օրագիրը, որ մեր եկեղեցիէն ներս ունենալով ինքնները բարձրութիւն, և ինքն ալ բողոքական կրօնքը մեր եկեղեցին մտցնելու և Հայաստանեայց եկեղեցին բողոքական եկեղեցւոյ յեղաշրջելու նպատակին մէջ յաջողի:

«Հայաստանեայց եկեղեցին միշտ կենդանի է և պիտի մնայ, կըսէ, ազգային միութեան հետ, զի երբ Հայ չկայ աշխարհիս երեսը, Հայաստանեայց եկեղեցի ալ չկայ. երբ Հայը զորաւոր է՝ Հայաստանեայց եկեղեցին ալ զորաւոր է»:

Մեր համոզումն այս է թէ՛ ինչպէս որ շատերուն ալ այսպէս ըլլալ կը հաւատանք, Հայաստանեայց եկեղեցին ա՛յն ատեն իւր միութիւնը կը կորսնցնէ ու փոստգրի կենթարկի, երբ ազգին եկեղեցական իշխանութիւնն իւր որդիքը՝ Օրագրոյ պէս ի կրօն գիմակաւոր և փոստգաւոր անձէ մը զգուշացնելու փոյժ շտանիր, և թոյլ կուտայ որ անոր քարոզած կեղծուպատիր վարդապետութեանց պէս միայն հրատարակութեանց հաւատ ընձայելով, եկեղեցւոյ խորհուրդը, աւանդութիւն, արարողութիւն և այլն, բանի տեղ չըդնեն, հետեւապէս եկեղեցւոյ ու ազգային միութեան բարոյապէս բաժնուին, և Օրագրոյ նման զուրիշներն իսկ բաժնել ջանան, չարամտութեամբ և դալթակողական միջոցներով: Այս ընթացքով Հայաստանեայց եկեղեցին՝ փոխանակ իւր միութեամբը զարգանալու և զորանալու, նորոգում մատերու ալ թելու բաժնուի, և հետեւանք ծանր կըշուէ ազգին: Սակայն երբ Օրագրոյ պէս վնասակար քարոզութիւններ ընող դիմակաւոր անձինք ճանչուին,

և անոնց դրութիւններն հրապարակու հերքուին ու դատապարտուին, մանաւանդ ի պաշտօնէ, այն ատեն միայն Հայաստանեայց եկեղեցին՝ ինչպէս կըսէ Օրագիրը, էր Բաւթեմէք զօրաւոր կը ծնայ, ոչ թէ իւր կրօնքը իրմէ բաժանեալ մասերուն զոհելով, այլ իւր անկեղծ և միաժառ սրդիքը, կերպարանաւ անգամայն չարանիւթ մեքենայութիւններէն և անոնց պատճառած ծանր դալթակողութիւններէն զգուշացնելով:

Պէտք է գիտնայ Օրագիրը թէ Հայաստանեայց եկեղեցին իր ըսած ազգային միութեամբ կենդանի և զորաւոր չկրնար մնալ, երբ անոր միութեան կենսական տարրերը՝ այն է հարազատները, օտար կրօնքը ընդունելու կը հրաւիրէ, օտար շահերու դործիք ըլլալով, և դարձեալ խաբել կուզէ ազգը թէ՛ ազգային միութեան փափաքող է:

Եթէ Օրագիրը անկեղծ է իւր միութիւն հաստատելու ջանից և ճգանց մէջ, փոխանակ Հայաստանեայց եկեղեցւոյ առաջարկելու այդ միութեան զոհողութիւնը, թո՛ղ բողոքականաց առաջարկէ, և համոզէ զանոնք որ իրենց մայրենի եկեղեցւոյ և ազգային միութեան դրօշին ներքեւ վերադառնան՝ որպէս զի իւր առաջարկած ազգային հանրական միութիւնն այդ կերպիւ ի դըլուխ ելնէ:

Մեզ դէմ ծիծաղաշարժ զրպարտութիւն մ'ալ կընէ Օրագիրը, ըսելով թէ՛ «հատարանութիւն բանալու կուզէ ազգին մէջ, և հարածանք ձեռք առնուլ, որոյ ապացոյց է ըստեպ կրօնական ժողովոյ վրայ յարձակիլն»:

Կը հարցնենք իրեն. ե՛րբ և ո՛ր յոգևածնուս մէջ հատարանական խօսք մը կամ սկզբունք մը տեսնուած է՝ Օրագրոյ և իւր նմանեաց կրօնական արարողութեան նուիրումներ, և ե՛րբ իւր պարտադանց իրենց համար եկեղեցւոյ իշխանութեանէն դատարարութիւն պահանջած ենք: Միթէ՛ ազգին դէմ նիւթը մը կրօնական դաւադրութեան իրնդիր մը քննադատել և Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ սրբւոյ մը պարտադրութեամբ հրապարակու մասնաճիշտ ցուցնել և նշաւակել դաւադիրը՝ հատարանութիւն կըրնա՞յ համարուիլ. և միթէ՛ ի զգուշութիւն միաժառ ժողովրդեան՝ ազգային կրօնական ժողովոյ ուշադրութիւնն առ այն հրաւիրել, ատակից՝ հրժանեալ Բողոքական կրօնքին հետեւիլ — ոչ երբէք: Օրագրոյ այս անիրաւ զրպարտութիւններն հասարակ հայրենց ըսելէ դուրս մեկնութիւն չեն վերցնիր, փաստ և սպառնալով պէտք է իննստաներորդ բուսաւորութեան դարը փաստ կուզէ համոզուելու, և ոչ թէ չոր ու ցամաք խաբէական խօսքեր:

Բայց ինչո՞ւ չզրպարտայ Օրագիրը և հայհոյութեանց ու զրպարտութեանց չղիմէ, երբ կը խորհի թէ կրօնական ժողովոյ անաչառ դատապարտութեան բնաւ ազատելիք չունի, մինչդեռ յիշեալ ժողովոյ անդամներէն ոմանք, մօտերս՝ թէ և անպաշտօն կերպիւ, ըսեր են որ՝ մեր ցուցած և քննադատութեան առած Օրագրոյ կրօնական հրատարակութիւններն ստորդ է թէ Հայաստանեայց եկեղեցւոյ օրինաց հակառակ և մարտական են, և թէ կրօնական ժողովը մտադիր է եղբր Օրագրոյ այդ հրատարակութիւններն օրինաւոր քննութեան առնուլ և ի պաշտօնէ դատապարտել, ըստ իւր անհրաժեշտ պարտականութեան զոր ազ-

գային Սահմանադրութիւնը իւր վերայ կը դնէ, այն է «Ազգին մէջ կրօնական զգայութիւնը զարգացնելու հաստատանայց եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւններն անխախտ պահել, և ծագած կրօնական վեճերը քննելով՝ եկեղեցւոյ օրինաց համեմատ լուծել» (Յօդ. 28 Ազգ. Սահմ.):

Այս անգամ Օրագրոյ ծանրակը լիւր մէկ մղար հրատարակութիւնն ալ մէջ բերենք, որ իւր 811 թուոյն մէջ երեցած է, և զոր—թէ և ոչ ի պաշտօնէ—հերքած և դատապարտած են հրապարակու երուսաղէմայ Սեօն ամալթերթի և Սրմուշու փանոց միաբան հանգուցեալ փափաքան Ստեփանոս վարդապետն. անոնց երկուքն ալ այդ դրութեան Հայաստանեայց եկեղեցւոյ հակառակիչ ակներև ապացուցած, և միապէս դատապարտած են անոր հեղինակները բացարձակ ըմբոստ եկեղեցւոյ դէմ: Այս վկայութիւններն եկեղեցական անձանց վկայութիւններ ըլլալով, զորս ըրած են յիշեալ եկեղեցականներն ազգային կրօնի նախանձախնդրութեամբ, չենք կործեր որ կրօնական ժողովն անտարբեր մնայ անոնց առջև, և իւր լուրսութեամբն այդ նկար դրութեան համակարծիք երևնալու արամադրութեան մէջ դնէ ինքզինքը, որ կուսակրօն կամ ուխտեալ եկեղեցականաց ամուսնութեան այսինքն չընալթեան յորդոր կը կարգայ, և մեղապարտ կը ճանչէ եկեղեցին և անոր պաշտօնեայններն՝ որ կուսակրօնութիւնը կընդունին և կուսակրօն եկեղեցականներ կը ձեռնադրեն Ահաւասիկ Օրագրոյ խօսքերը:

Յերաս մը տալ կուզենք ի վերջապետին և նմանեացը. «Վարդապետ, դու յանցանք չունիս, յանցանքը կուսակրօնութեան ուխտը քեզնէ առնողինն է, քեզնէ ձեռնադրողինն է»:

«Վարդապետ, բնութեան հրամանացը դէմ դնել կը փորձուի քու այդ հասակից մէջ. ետ կընցի այդ փորձէն, ԲԱՅՍԵՐԱՍԱՊԷՍ ԱՄՈՒՄԱՅԻՐ, և կուսակրօն վարդապետ ըլլալով՝ ամուսնացեալ քահանայ եղի»:

«Վարդապետ, Օրագիրը այս խորատը ոչ միայն քեզ կուտայ, այլ այն ԱՄԵՆ ԿՈՒՍԱԿՐՈՆԵՐՈՒՆ, որք կարող չեն իրենց ուխտը պահել, որ կարողն է ունենալ տարցի, կըսէ Ս. Գիւրբը»:

«Վարդապետ, քու ըրածդ բնաւ յանցանք չէ, և մեկու մ'ալ վնաս չունի, քու բնական և մարդկային իրաւունքը ու պարտքը է որ կ'կատարես. քեզ յանցաւոր ու անբարոյական դատողը՝ քու ուխտը է՝ նեճէ՛ ՎՐԱՅԻ ԱՅՅ ԱՆԲՆԱԿԱՆ ՈՒԽՏԸ, և աղաթ ատոր տակ ճնշուելէք»:

«Այս է իտեպի և բնական ճամբան, և այս է Օրագրի ալ խրատը՝ ամեն անոնց՝ որք կարող չեն կուսակրօնութեան ուխտերին պահել» (Օրագիր թիւ 811)

Հայաստանեայց եկեղեցւոյ հիմնական և անկեղծ օրէնքն է որ՝ եկեղեցական մը՝ կուսակրօն ըլլալ թէ երեցիկը մեռած քահանայ, բնաւ չկրնար ամուսնանալ. այս օրէնքն ընդհանուր քրիստոնեայ եկեղեցիքի ԲԱՅ ԱՌԷՍԻ ԲՈՂՈՒՄԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ, ընդունած են, և ցարդ մասշիւ չափ չեն շեղած ասկէ:

Ահա՛ սակէց ալ բացայայտ կերակ թէ Օրագիրը՝ բողոքական կրօնի ներշնչութեամբ, և անոր շահերը միայն պապականելու մտք, այս օրէնքն ի հիմանց տապալել կը ջանայ, որովհետև բողոքական եկեղեցին







